ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունիսի 2020թ. թիվ 440-Ա

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԻՍԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 16.03.2020թ.-ի № 298-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վարդուհի Սիսակյանի բացատրությունները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն կորոնավիրուսային հիվանդանոց դարձնելու հարցի քննարկման ընթացքում «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատակիցների ոչ պատշաճ վերաբերմունքի և երկրում հայտարարված արտակարգ դրության պայմաններում բուժծառայողին ոչ վայել վերաբերմունք դրսևորելու համար «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վարդուհի Սիսակյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վարդուհի Սիսակյանին՝

Բժշկական կենտրոնի անձնակազմի հետ իրականացնել անհրաժեշտ բացատրական աշխատանքներ՝ հետագայում նմանատիպ երևույթները բացառելու համար:

3. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 8
ք.Վանաձոր